

Ա. ԱՍՏՐՅԱՆ

ԱՐԴՎՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱԳՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Առանձնատիպ Հայկական ՍՍԸ Գիտությունների  
Սկզբանի 1948 թ. № 9 «Տեղեկագրից»

891.99(09) [Արովան] 27162

Գ-73 [Անտառյան, Աս.]  
Խ. Արովանի գրական ժառան-  
շյան պատմությունից:


891.99.099 [Արտադրություն]

ՎՅՈՒԴՎԱՐ Հ 1948 թ.

Ա-73

Ա. Առաքյան

A 3/570

## Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

I.

«ԱՇխ, երաբ, ինչ սրտով որ գիշերը քունս կտրած, էսպես բաները գրում եմ, մուրազս տեղ կհասնի, թե չէ»—ասում է Արովյանն իր՝ մինչև վերջերս անհայտ երկերից մեկի նախարանում:

«Ի խորոց սրտի» բխած այդ ցավագին հառաջանքը ցայտուն կերպով արտահայտում է այն տանջալի, բայց և ազնիվ զգացմունքը, որ տիրական է եղել մեծ լուսավորչի ու հայրենասերի ապրումներում նրա աժրողջ գործունեության ընթացքում:

Արովյանի այրող «մուրազն» այն էր, որպեսզի իր անքուն գիշերների սաեղծագործական տքնության արդյունքները «տեղ հասնեին»՝ համատարած խավարի մեջ խարխափող իր ճնշված ժողովրդին լուսավորելու նրա միտքը, արթնացնելու և զինելու նրան իր գոյության պահպանման և աղդային աղատագրության պայքարի համար:

Արովյանի «մուրազը», սակայն մնում էր անկատար, նրա գրածները լույս աշխարհ չեին դալիս: «Մարդ աշխատում է առանց հաջողության»<sup>1</sup>—տիսուր, հուսահատ գանգատվում է նա՝ իր ողբերգական անհայտացումից մի քանի ամիս առաջ՝ Խրիստիան Ֆրենին գրած իր մի նամակում:

Մինչև իր «անհայտ բացակայությունը» Արովյանն ապրում էր՝ մեծ գրողի համար ծանրագույն ողբերգությունը՝ իր ստեղծագործության անհայտ մնալը ժողովրդին:

Իսկ դրա պատճառը, ըստ երեսութին ոչ միայն այն էր, որ տպագըր-վելու հնարավորություն չկար, այլ գլխավորպես առաջնական անտիպ ու անհայտ նրա կենդանության օրով: Ու դրա հետեւանքով էլ Արովյանին ժամանակակիցները ճանաչել են միայն ու միայն կամ գերազանցապես իրեն ուսուցիչ-մանկավարժ, իրեն ժողովրդական կրթության եռանդուն գործիչ, բայց ոչ իրեն մեծ գրող, որն իր ստեղծագործությամբ կոչված էր հայ նոր գրականության հիմքը դնելու: Եվ եթե անմահ գրողի ողբերգական անհայտացումից երկու տարի հետո՝ 1850 թ., նրա երախտավոր աշակերտ Գ. Աքիմյանը և վերջինիս շնորհիվ՝ Գ. Հախվերդյանը բարեբախտ առիթ չունենային ծանոթանալու նրա գլուխ գործոց «Վերք Հայաստանի» վեպին, ու եթե վերջինս 1858 թ. էլ հրատարակված չլիներ, ապա Արովյանը

Դիմում Խ. Արովյանի, Ա., էջ 122.

<sup>1</sup> «Դիմում Խ. Արովյանի», Ա., էջ 122.

իբրև զրող երկար ժամանակ ամրողջովին դեռ կմնար անհայտ, ինչպես զեռ անհայտ է մնում նրա ողբերգական կորստի գաղտնիքը, որի լուսաբանումը արովյանագիտության չվճարված պարտքի մեջ է մնում:

Բայց ոչ միայն այդ դժվար լուծելի «գաղտնիքը», այլև մեծ դրողի ու լուսավորչի գրական ժառանգության ամրոջական պատկերն էլ մենք չունենք նրան վերաբերող ոչ քիչ թվով հրապարակված ուսումնասիրություններում ու լրագրական հոդվածներում:

Թե ինչ է տպագրվել հեղինակի գեղարվեստական երկերից նրա կենդանության օրով և նրա մահվանը հաջորդող առաջին երկու տամնամյակում՝ 50—60-ական թվականներին, տպագրվածներից որը, ինչքան ձեռագիր է ունեցել, բացի ներկայիս պահպանվածներից,—Արովյանն էլ ուշից ինչ երկեր է ունեցել, որոնց ոչ ձեռագրերը կան և ոչ էլ որևէ անգամ տպագրվել են, նրա հարուստ նամակագրություններից, օրագրական տետրերից ինչքանը մեղ չի հասել, եայն, և այլն,—ահա հարցեր, որոնց ճշգրիտ և սպառիչ պատասխանը դեռ չի տրվել մինչև հիմա, երբ մենք նշում ենք մեծ հայրենասեր դեմոկրատ-լուսավորչի ու դրողի մահվան 100-ամյա հոբելյանը:

## 2.

Արովյանին վերաբերող գրականությունից որոշ չափով հայտնի է «Նախաշավիղի» տպագրության պատմությունը, որին հարկ չկա այստեղ անդրադառնալու:

Սակայն ոչ ոք չի անդրադառել այն հարցին, թե Արովյանը «Նախաշավիղից» հետո իր երկերից որն էր մտադիր տռաջին հերթին հրատարակել, եթե դրա համար հնարավորություն ունենար, եթե նրա պաշտոնական-քաղաքական ու անձնական հակառակորդները չկարողանային խանգարել նրա վառ ցանկության կատարմանը՝ իր գրածները ժողովրդին հասցընելու նրա նվիրական «մուրազը»: «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի «Հառաջարանում» (որը ինչպես հայտնի է, գրված է 1841 թ.) Արովյանն ասում է.

«Շատ բաներ էսպես գրել, հազիր եի արել աշխարհաբար, բայց ելք սիրտ չեի անում, որ լիս ցցեմ: Վախենում էի թե ժամանակս, փողս կորչի, գիրքս էլ մեկ տեղ թողումը վեր ընկած մնա, փթի: Բարեկամ մարդիկ, որ վախտ-վախտ տեսան, խօրհեարդ տվին ինձ, թե շատ լավ կըմ, որ տպիւ տամ: Իրավ՝ թե որ մուրազ տեղ հասնի ու գրածս ազգին դիր զա, որքան բախտավոր կլինեմ: Են ժամանակը ջանի կանեմ, որ դիա լավ բան գրեմ, բոլ և առաջի նի ն և և ապես ըլի»:<sup>1</sup>

Արովյանի այս խոսքերը վկայում են այն ժամին, որ նա՝  
ա. «Շատ բաներ էսպես գրել», տպագրության համար «հազիր էր տրել», մինչև 1841 թ. ներառյալ, երբ գրել է հիշյալ «Հառաջարանը»:

բ. Որ տպագրության համար այդ «հազիր արած» երկերը բոլորն էլ աշխարհաբար են՝ գրված «մեր խալխի» համար:

գ. Բայց Արովյանը վախեցել է իր այդ երկերը «լիս քցել», ենթադրե-

<sup>1</sup> Խ. Արովյան—Ընտիր երկեր, 2-րդ հատոր, 1940 թ., էջ 390: Ընդգծումներն իմն են:

լով, թե ոչ միայն իր «Ժամանակ» ու փողը կկորչի», այլև դուքն իր տըպ-ված «գիրքը մեկ տեղ թողումը վեր ընկած մնու, փթի», — տարածող ու կարդացող չունենա:

Դ. Արովյանի այդ վախն իմանալով՝ «բարեկամ մարդիկ, որ վախտվախտ տեսելը են նրա աշխարհաբար գրվածքները՝ խրախուսել ու «խորհուրդ են տվել», «թե չատ լավ կըլի, որ տպել տա»:

Ե. Եվ վերջապես՝ հաստատ կարելի է ասել, որ Արովյանն առաջին ներքին հրատարակելու էր «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն և ոչ թե «Վերք Հայաստանին» կամ մի ուրիշը՝ նրա աշխարհաբար գրվածքներից:

«Թող ես առաջինը հսկես ըլի» արտահայտությունը անկասկած վկայում է այդ մասին, որովհետեւ ասված է նույն այդ ժողովածուի «Հառաջարան»-ում:

Արովյանի այդ մտադրությանը տեղյակ են եղել ամենից առաջ նրա աշխարհական ճիշտ է, Արովյանին չի հաջողվել իր նվիրական իղձն իրականացնել՝ «լիս քցել», հրատարակել «Պարապ վախտի խաղալիքը», բայց ըստ երեսութին այնքան հաստատուն ու որոշ է եղել և այնքան տարածված Արովյանի այդ մտադրությունը, որ նրա աշխարհական հետազայում համոզված են եղել, թե՝ իրոք Արովյանն իր այդ մտադրությունը կատարած է եղել՝ հրատարակել իր առակների գիրքը. Այդ տեսակետից պատահական չէ, որ նրա հավատարիմ աշխարհական մեկը՝ Գ. Աքիմյանը հետադայում՝ իր ուսուցչի մահից տասնամյակներ հետո՝ Ս. Քամալյանին թելագրած իր հուշերում՝ իբրև իրողություն է հաղորդում այն, թե Արովյանը «վերջին այդ բաները (իր՝ «գրած առակները՝ առասպելները») առանձին զբով տպել տվեց, անունը դրեց «Պարապ վախտի խաղալիք», որ ժողովուրդն էլ աշխարհաբար բան կարդա»:

«Անթիվ գրածներից, — ասում է Աքիմյանը, — մինչև Երևան տեղափոխվելը, իմ քաղցր և ընտիր վարժապետը տպել էր միայն «Պարապ վախտի խաղալիքը»: Ես այդ միջոցին 15 տարեկան էիմ:<sup>1</sup> Գ. Աքիմյանի այս անվերապահ հայտարարությունը դժբախտաբար մինչև օրս չի հաստատվել: Նա, ըստ երեսութին, շփոթում է «Նախաշավիղի» տպագրությունը «Պարապ վախտի խաղալիք» հետ: Բայց գուցե և ճիշտ է, գուցե իրոք «Պարապ վախտի խաղալիքն» և «Նախաշավիղ»-ից հետո, նույնպես տպագրվել է, սակայն լույս չի տեսել: Համենայն դեպք, եթե դրա համար առայժմ որևէ այլ ապացույց չկա, բացի Աքիմյանի հայտարարությունը, այնուամենայնիվ այդ էլ անկասկած է դարձնում, որ Արովյանն իր աշխարհաբար երկերից առաջինը հրատարակելու էր «Պարապ վախտի խաղալիքը» և ոչ թե «Վերք Հայաստանին» կամ մի այլ աշխատություն:

Մեր այս պնդումը կարելի է մի լրացուցիչ փաստով ևս հաստատել, նորից դիմելով իրեն՝ հեղինակին: Մենք նկատի ունենք գարձյալ նույն «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի «Հառաջարանի» նախավերջին պարբերությունը, որը լիակատար հիմք է տալիս պնդելու, որ տպագրության համար պատրաստ իր գեղարվեստական երկերից Արովյանն առաջին

<sup>1</sup> «Ժամանակակիցները» Խ. Արովյանի մասին. կազմեց Հր. Մուրադյան, 1941 թ., էջ 112, 117:

հերթին ուղղում էր ու վճռել էր հրատարակել հիշյալ ժողովածուն։ Շատ հակիրճ կերպով ծանոթացնելով ապագա ընթերցողին իր սիրելի հերոսի՝ Աղասու պատմությանը, Արովյանն այնուհետև նշում է. թե՝ ուրա (իժան և Աղասու. Ա. Ա.) պատմությունը շատ երկար է, որ զրած մոտիս հազիր ունին, որ նրանով կարելի է իմանալ էն ժամանակվա մեր աշխարքի հալը։ Դրքի անունն ա Վերք. Հայաստանի, ողբ հայրենասերի։ Էնպես էլ շատ զվարնալի պատմություններ աշխարհաբար գրած՝ մոտիս հազիր ունին։ Ով դիտի, բաւքի մեկ աստվածասեր մարդ իր հոգու խաթեր տուիլ տա։ Ես չկարացի բոլորը ի միասին զրել, չունի խարջը շատ կըլեր»։

Պարզ է, այս ամենը «Վերքի» և մյուս «աշխարհաբար ըաների» մասն կարելի էր գրել միայն այն գրքի առաջաբանում, որն որ ամենից շուտ էր լույս տեսնելու, որպեսզի ընթերցողները դրա սիջոցով տեղեկանային, որ այդ գրքի հեղինակը տպագրության համար իր մոտ «հազիր ունի» էլի ուրիշ շատ գրվածքներ են, որոնք «մեկ աստվածասեր մարդու»—բարյացակամությանն են կարոտ հրատարակության համար։

Ակրոհիշյալից միանգամայն պարզ է ու որոշ, որ իր առակների ժողովածուից («Պարապ վախտի խաղալիք») հետո՝ տպագրության երկրորդ հերթը «Վերք Հայաստանի»-իննէր, որի «լիս քցելն», ըստ երեսութին ավելի հեռավոր ու դժվար իրականանալի երազ, անկատար «մուրազ» էր թվում Արովյանին։ Վերելի քաղվածքում՝ տպագրության համար «հազիր» «շատ զվարհալի պատմություններ աշխարհաբար գրած»՝ ասելով՝ Արովյանն անշուշտ նկատի ունի իր «Զվարճալի ու կարճ պատմությունք», «Կարճառոտ պատմությունք», «Իշխ հարսանիք» վերնագիրն ունեցող արձակ երկերը, որոնք տուածին անգամ տպագրվել են հեղինակի երկերի 4-րդ հատորում (1947 թ.) և որոնց գրության թվականն անհայտ է։

Նկատի ունենալով «Պարապ վախտի խաղալիքի» «Հառաջաբանի» գրության հայտնի թվականը (1841 թ.), դրա հիման վրա կարելի է ասել, որ Արովյանի ասած այդ «զվարճալի պատմությունները» նույնպես գրված պատրաստ են եղել մինչև 1841 թվականը։

Այս առնչությամբ կարենու ենք համարում զոնե մասնակիորեն անդրադառնալ Արովյանի՝ սեղ հայտնի երկերի գրության թվականները որոշելու հարցին։

Հեղինակի «Երկերի լիակատար ժողովածուի» ակադեմիական հրատարակության 4-րդ հատորի (լույս տեսած 1947 թ. վերջերին) ծանոթագրություններում անթվակիր երկերից որոշված է միայն մեկի («Վերջին հրաժարական քաջաղոր արքային Հերակլի») գրության թվականը։ Հատորի մեացած բոլոր երկերի համար (բացառությամբ «Թիոդորա կամ որդիական սեր» դրամայի, որի գրության թվականը հեղինակը ինքն է նշել՝ 1841 թ.) ասված է թե՝ «զրության (կամ՝ թարգմանության) թվականն անհայտ է» (տես այդ հատորի ծանոթագրությունները, էջ 319—325)։ Բայց ելնելով «Պարապ վախտի խաղալիքի» «Հառաջաբանից» և հենց այդ երկերի բուգանդակության տվյալներից, կարելի է հավանական համարել, որ զրանց մեծ մասը (բացառությամբ «Աշխարհիկ բարբառ երեանցի հայոց», «Պատմություն Տիգրանի» ու թերեւ մեկ երկու այլ երկերի) գրված է Թբիլիսիում և այն՝ մինչև 1841 թիվը, այսինքն մինչև «Պարապ վախտի խաղալիքի» «Հառաջաբան»-ը գրելը։ Իսկ «Աշխարհիկ բարբառը», «Պատմու-

թյուն Տիգրանի» վեպը, «Օվսաննա» միալակը, շատ հավանական է, որ գրվել են Երևանում՝ հայենայն դեպք 1843—44 թ. թ. հետո, բայց ոչ ուշ, քան մինչև 1845—1846 թ. թ.։

## 3.

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե Արովյանի կենդանության օրով տպագրվել է նրա ինքնուրույն կամ քարզմանական գեղտրվեստական երկերից որին մեկը: Մեր պրալտումները ցույց տվին, որ այդ հարցին կարելի է դրական պատասխան տալ: Մենք առայժմ կարող ենք հաստատապես խոսել սիայն մեկի մասին: Դա «Աղելախղա ֆոն Վուլֆինդինյան» կամ արձանագիր բարբարոսության երեք տասներորդ դարու ...ի չորս արկածու վերնագրով «Եղերերգությունն» է, որի թեման վերցված է խաչակրաց արշավանքների պատմությունից, բուն հեղինակն առայժմ հայտնի չէ:

«Աղելախղայի» առաջին գործողության սկզբի մի փոքրիկ մասը տպված է Արովյանի «Երկերի լիակատար ժողովածուի» 1947 թ. վերջերին լույս տեսած Դ. հատորում, հեղինակի արխիվում պահպանված այդ մասի ինքնագրի համաձայն: Տպագրված այդ պատասիկի վերաբերյալ հիշյալ հատորի համապատասխան ծանոթագրության մեջ ասված է սիայն, թե՝ «ինքնագիրը... պահպում է Գրական թանգարանում, Արովյանի արխիվ № 11», թե նրա «թարգմանության թվականն անհայտ է» և թե՝ «տպագրվում է առաջին տեղամ» (էջ 325):

Նախ այս ծանոթագրությունից չի իմացվում, որ այդ ինքնագիրը գրվածքի սիայն առաջին գործողության սկիզբն է: Ծանոթագրողը չի էլ փորձում որևէ բացատրություն տալ այդ երկի անավարտ մնացած լինելու և հարակից այլ հարգերի վերաբերյալ: Ի հարկե, եթե խոսքը սիայն այս պատասիկին վերաբերվեր, անշուշտ ճիշտ է, որ, դա «տպագրվում է առաջին անգամ»: Բայց Դ. հատորը կազմողին ու ծանոթագրողին հայտնի չի եղել, որ «Աղելախղա» եղերերգությունը ունեցել է մի այլ, արդեն ամբողջական ձեռագիր, որը և այդ հատորի հրատարակությունից ճիշտ մեկ պար առաջ սկսվել է տպագրվել Արովյանի կենդանության օրով Թիֆլիսի «Կովկաս» շաբաթաթերթում 1846 թ. վերջին (№ 49, դեկտեմբերի 7) և 1847 թ. առաջին համարում (№ 1, հունվարի 4), դժբախտաբար, սակայն, տպագրությունը մնացել է անավարտ: Թեև վերջին համարում տպված հատվածից հետո նշված է «շարունակութիւնն ի միւս թերթն», սակայն նույն տարվա հետագա համարներից ոչ մեկում շարունակությունը չի տպված:

«Աղելախղան» ըստ երեսույթին եվրոպական որևէ գրողից կատարված թարգմանություն է: Անհայտ է գրության (հայերեն թարգմանության) թվականը: Իսկ այն փաստը, որ երկը գրաբար լեզվով է՝ ամենսին չի կարող հիմք տալ ենթադրելու, թե այն գրված կամ թարգմանված է ավելի վաղ՝ քան, ասենք՝ «Վերք Հայաստանին» կամ Արովյանի մյուս աշխարհաբար երկերը: Հայտնի է, որ Արովյանը նույնիսկ «Վերքը» գրելիս չի հրաժարվել գրաբարից (վեպի նշանագոր հավելվածը՝ «Զանգին»՝ զգալի չափով գրաբար է). ավելին. «Վերքից» հետո էլ՝ Արովյանը մինչև իր կյանքի վերջը՝ աշխարհաբարին զուգընթաց գրել է նաև գրաբար, մեծ մասամբ բանաստեղծություններ:

Պիեսի լեզուն գրաբար է, ըստ երեսույթին այն պատճառով, որ Արով-

յանը հաշվի է առել «Կովկաս»-ում տպագրվելու հանդամանքը, մի թերթ, որի պաշտոնական լեզուն զրաբարն էր, թեև մեկ-մեկ տպագրում էր նաև աշխարհաբար լեզվով նյութեր:

Արովյանի արխիվում պահպանված նյութերում, ըստ որում և նրա նամակագրության մեջ ոչ մի հիշատակություն ու ակնարկ չկա «Աղելակայի» մասին, բայց նշենք, որ ոչ մի հիշատակություն չկա նաև հեղինակի ոչ մի այլ գեղարվեստական երկի մասին։ Հետեւաբար, եթե նրա արխիվում պահպանված չլիներ այդ պիեսի փոքրիկ պատառիկը, ոչ ոքի մըտքով չէր անցնի, թե Արովյանի գրական ժառանգության հետ որևէ առնչություն ունի «Կովկաս»-ում տպված այդ գրվածքը։

Եվ իբրոք կարելի է, որևէ հիմք կամ «Կովկաս»-ում տպված «Աղելակայի», որն անստորագիր է՝ վերագրել Արովյանին, ենելով միայն այն փաստից, որ հեղինակի արխիվում պահպանված է նույն գրվածքի սկզբի պատառիկը։

Մինչև այժմ հայտնի չի եղել, որ Արովյանը որևէ կապ է ունեցել «Կովկաս» թերթի հետ, նկատի ունենալով այդ թերթի գրական-գաղափարական ուղղությունն իբրև կղերա-ոլահպանողական օրգանի, որը զգալի չափով կովկասյան փոխարքայական „Կավկազ” թերթի հայերեն պատճենն էր։

Վաղուց ի վեր հայտնի է Արովյանի աշխատակցությունը „Կավկազ” թերթին։ Իսկ «Կովկասին» աշխատակցելու մասին ոչ մի վկայություն ու հիշատակություն չկա՝ Արովյանի այնքան հարուստ անձնական նամակագրության ու պաշտոնական գրագրության մեջ։

Այնուամենայնիվ բնական հարց է առաջ դաւիս, որ եթե Արովյանը կարող էր աշխատակցել կովկասի փոխարքայական պաշտոնական ուսուերեն օրգանին, ինչու նա ցանկություն ու պահանջ չէր զդա աշխատակցելու նաև իր ժամանակի կովկասյան միակ հայերեն պարբերականին՝ «Կովկաս» շաբաթաթերթին (որի խմբագիրներն էին Հ. Կարենցանը և Արգանյանը), Համենայն դեպս փաստ է «Աղելակայի» տպագրվելն այդ թերթի էջերում, ինչպես և նրա անավարտ մնալը, որը շատ ուշագրավ մուտքայի Արովյանի գրական-հասարակական գործունեության մեջ։

Համառոտակի անդրադառնանք այն հարցին, թե ինչ հանդամանքներում է սկսվել «Աղելակայի» տպագրությունը և վերջինիս ընդհատումը։ Այս հարցին անվերապահ ճիշտ պատասխանելու համար որևէ ուղղակի վկայություն չկա։ Բայց կան անուղղակի տվյալներ, որոնք կարող են լույս սփռել մեզ հետաքրքրող այս հարցի վրա։

Մենք նկատի ունենք այն վկայությունները, որոնք վերաբերում են Արովյանի՝ 1844—47 թ. թ. ընթացքում Երևանից Թբիլիսի կատարած այցելություններին և Թբիլիսիի հետ՝ այդ տարիներին Արովյանի ունեցած կապերին։ Հայտնի է, որ Հ. Արիխի ճանապարհորդությունը Հայաստանում ծրագրելու առթիվ, Արովյանը 1844 թ. ապրիլի վերջերին եղել է Թբիլիսիում ու այնտեղից նա առաջնորդել և ուղեկցել է հիշյալ գիտնականին՝ ուսումնասիրելու Հայաստանը երկրաբանական տեսակետից։ Բայց այդ ժամանակ գեռ ոչ „Կավկազ“-ը և ոչ էլ «Կովկաս» էր հրատարակվում, այդ երկու պարբերականների էլ հրատարակությունն սկսվում է 1846 թվի սկզբից՝ հունվարից, միաժամանակ՝ 7-օրյա պարբերականությամբ։

Այդ թերթերի հրատարակության հենց առաջին օրերից Արովյանը՝ ցանկություն ու մտադրություն է ունեցել աշխատակցելու և իր աշխատակցությունն սկսել է „Կավկազ“-ից, որին, ինչպես վերևում նշեցինք՝ նա ուղարկում է տպագրելու իր «կազմած մի քանի դիտողությունները» «տեղիս (=Երևանի) օդի բարեխառնության մասին»:<sup>1</sup>

Պետք է ենթադրել նաև, որ Արովյանը մտադրվել է միաժամանակ աշխատակցել և «Կովկաս» թերթին, ըստ որում նկատի ունենալով այդ թերթի պաշտոնական լեզուն (գրաբար), երեխ հարմար է դժել իր աշխատակցությունն այստեղ սկսելու «Աղելախիդայով», որն՝ ինչպես իր «Օղերեւթաբանական տեղեկությունները», ուղարկել է գուցե ծանոթ մորդկանց միջոցով, հնարավորություն չունենալով ինքն անձամբ հանձնելու այն խմբագրության:

Բայց եթե ձեռագիրը տպագրության հանձնելիս Արովյանը անձամբ չի եղել Թբիլիսիում, ապա նրա տպագրության ընդհատումը զուգադիպում է Արովյանի՝ 1847 թ. հունվարի սկզբին այնտեղ լինելուն: Ավելին, կարելի է ենթադրել, որ Արովյանի հենց այդ այցելությունը Թբիլիսի՝ բացասական առումով բախտորոշ նշանակություն է ունեցել «Աղելախիդայի» շարունակության տպագրման համար: «Սովետական Հայաստան» թերթում տպված մեր հոդվածում (1948 թ. հուլիսի 2-ի №-ում) մենք ենթադրաբ գրել էինք, թե՝ «Աղելախիդայի» տպագրության դադարեցումն ըստ երեւյթին եղել է, ի թիվս այլ պատճառների, գուցե և այն պատճառով, որ 1847 թ. հունվարին... թերեւ Արովյանի անձնավորությանը վերաբերվող քաղաքական նկատառումներ՝ հարկադրել են խմբագրությանը դադարեցնելու մեծ լուսավորչի գրչին պատկանող այդ երկի շարունակության տպագրությունը: Նշել էինք նաև, որ «Կովկասի» հետագա համարներից ոչ մեկում որևէ ակնարկ չկա «Աղելախիդայի» մասին, ամբողջովին լուսավորված է մատնված այդ փաստը:

Այդ մասին ոչ մի հիշատակություն չկա նաև Արովյանի արխիվում պահպանված նյութերում: Գուցե եղել են հիշատակումներ՝ Արովյանի մեզ չհասած անհայտ նամակներում ու գրություններում, որոնց թիվը բավականաչափ մեծ է (այդ մասին կանգրադառնությանը առանձին):

1846 թվի ընթացքում Արովյանը բազմիցս դիմում է դպրոցների կովկասյան վերատեսչին, թույլտվություն խնդրելով Թբիլիսի գնալու (տես «Դիման Խ. Արովյանի» հ. Ա., 1941 թ., էջ 174, 176, 178), Բայց Արովյանի բոլոր այդ դիմումներն ու խնդիրները խստորեն մերժվում են՝ այն պատճառաբանությամբ, թե իբր Արովյանը պետք է դպրոցի վերանորոգումն սկսի ու ավարտի և հետո թույլտվություն ստանա Թբիլիսի գնալու համար: Վերջապես նույն տարվա վերջերին՝ դեկտեմբերի 11-ին՝ Արովյանը ավարտած լինելով դպրոցի շենքի պահանջմանը վերանորոգումները, նորից՝ այս արդեն չորրորդ անգամ, դիմում է վերատեսչին նույն խնդրով՝ թույլտվություն ստանալ իր արձակուրդի հաշվին 14 օրով Թբիլիսի գնալու:<sup>2</sup> Այս անդամ էլ ստկայն, Արովյանի դիմումը մերժվում է, հակառակ այն խոստման, որ տված է եղել վերատեսուչը Արովյանին դեռ տարվա սկզբին

<sup>1</sup> «Դիման Խ. Արովյանի» հ. Ա. էջ 172:

<sup>2</sup> Նույնը, էջ 178:

«Հունվարի 5-ի № 12 առաջադրությամբ», որի մասին հիշեցնում է Արովյանն իր վերջին գիտումի մեջ:

Նորից մերժում ստանալով, Արովյանն այս անգամ արդեն այլևս չի սպասում թույլտվության և 1847 թ. հունվարի 5-ին ինքնակամ գնում է Թրիլիսի:

Եղած գրությունները ոչինչ չեն ասում կոնկրետ, թե Արովյանն ինչեւ էր վճռել անպայման այդ թվականին (1846 թ.) 14 օրով Թրիլիսի գնալ և այնտեղ թնչ կարեռ գործով է զբաղվել—նույնպես հայտնի չէ: Բայց հայտնի է, որ նա Թրիլիսիում ներկայացել է ուսումնական մասի կառավարչին: Հասկանալի է, որ ցարական չինովակը ուրախությամբ չէր դիմավորի իր անհնագանդ ստորադրյալին: Եվ ահամի քանի օր հետո, ն. թ. հունվարի 11-ին Արովյանն ստանում է դպրոցների վերատեսչի գրությունը, որով նրան արգում է «հանդիմանություն» «Անդրկովկասի ուսումնական մասի պ. կառավարչի՝ հունվարի 7-ի № 16 թղթի» հիման վրա, «առանց նախապես իշխանության թույլտվությունն ստացած» Թրիլիսի գնալու համար և առաջարկվում «անմիջապես վերադառնալ պաշտոնատեղին»:<sup>1</sup>

Հայտնի չէ թե Արովյանը Թրիլիսի եղած ժամանակ երբ է ներկայանում ուսումնական մասի կառավարչին՝ ժամանելուն պես, թե հետո: Բայց հայտնի է, որ նա մնացել է այնտեղ 7—8 օր միայն և հանդիմանություն պարունակող գրությունն ստանալու հաջորդ օրն իսկ՝ վերադառնում է Երևան: Այդ մոսին է վկայում Արովյանի մի անթվակիր գրությունն ուղղված դպրոցների վերատեսչին՝ իրեւ անմիջական պատասխան իր ստացած հանդիմանագրի՝<sup>2</sup> հայտնելով, որ ինքը հրաժարվում է աշխատանքից, անկարող գտնելով այլևս նման պայմաններում աշխատելու:

Կարեռ է հիշել նաև, որ ինչպես հայտնի է, նախ քան Թրիլիսի դնալը՝ 1846 թ. հունիսի վերջին, Արովյանը ենթարկվում է «Երեք օրվա կալանքի պատժի» Անդրկովկասի դպրոցների վերատեսչի «առաջադրության հետևանքով», ոնորին պայծառափայլություն կովկասի կառավարչապետի, կամքով, այն «հանցանքի» համար, որ իրը նա՝ Արովյանը՝ «տգեղ վարմունք» է ցուցաբերել «Ներսես կաթողիկոսի Երևան մուտք գործելու ժամանակ»:

Բայց իրականում, ինչպես ասում է Արովյանը՝ Երևանից գրած իր բացատրականում (1846 թ. հունիսի 18-ին), «դրա պատճառն այն անախորժ դեպքն է, որ տեղի է ունեցել իմ և տեղիս գավառապետի միջև, մասնավանդ անցյալ (=1845 թ.) տարվա հանդիսավոր ակտի ժամանակ...», որի մասին Արովյանը ն. թ. նոյեմբերի 24-ի իր «№ 126 թղթով» զեկուցել է դպրոցների վերատեսչին:<sup>3</sup>

Արովյանի հետ պատահած ահա այդ «անախորժ դեպքերը» չէին կարող չանդրադառնալ և նրա գրական գործունեության վրա: Մենք հնարավոր ենք համարում, որ «Աղելախղայի» տպագրության ընդհատվելն ուղղակի կապ ունի հիշյալ «անախորժ դեպքերի» հետ: Բայ որում կամ դպրոցների ուսումնական մասի կառավարչի միջամտությամբ՝ «Կովկասի» խըժ-

<sup>1</sup> «Դիվան», էջ 178:

Նույն տեղում, էջ 221:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 175:

բազրությանն առաջարկվել է դադարեցնել հիշյալ երկի տպագրության շարունակությունը և կամ հենց ինքը խմբագրությունը՝ «Չը ջահայաց» լինելով, տեղեկանալով Արովյանի հետ պատահած այնքան «անախորժ դեպքերի» մասին, իսկույն դիրքորոշվում է, այլև թույլ չտալով «Աղելաիդայի» «Չարունակութիւնն ի միւս թերթն»: Եվ իրոք, դեպքերի զուգադիպությունն այնքան ակնհայտ է, որ այլ ենթադրություն չի կարող արվել: Այսպես. «Աղելաիդան» սկսել է տպագրվել «Կովկասի» 1846 թ. դեկտեմբերի վերջին՝ 49-րդ համարում: Առաջին գործողության շարունակությունը տպվել է թերթի հետևյալ՝ 1847 թ. №-ում, որ լույս է տեսել նույն թվի հունվարի 4 ին: Ինչպես նախորդ, նույն և այս №-ում՝ խմբագրությունը նշել է «Շարունակութիւնն ի միւս թերթն»: Այդ «մյուս թերթը» այսինքն լրագրի հաջորդ՝ 1847 թվի 2-րդ համարը, ուր լինելու էր պիեսի շարունակությունը, լույս է տեսել № 1-ից 7 օր հետո՝ հունվարի 11-ին: Իսկ Արովյանը թրիլիսի է գնում հունվարի 5-ին, Ուսումնական մասի կառավարչի գրությունը դպրոցների վերատեսչին գրվում է նույն հունվարի 7-ին, դրա հիման վրա վերատեսուչը գրում է Արովյանին հունվարի 11-ին, այսինքն նույն օրը, երբ լույս է տեսել «Կովկասի» հերթական համարը (№ 2-ը), արդեն առանց «Աղելաիդայի» խոստացված շարունակությունը:

Հետևաբար «Աղելաիդայի» մնացած մասի տպագրությունն անկասկած արդելվել է Արովյանի հետ նույն շրջանում պատահած «անախորժ դեպքերի» առնչությամբ:

Իսկ ինչ է ներկայացնում «Կովկասում» տպվածը Արովյանի արխիվում պահպանված պատառիկի համեմատությամբ:

Արովյանի արխիվում պահպանված հատվածի և «Կովկաս» թերթում տպագրվածի համապատասխան մասի համեմատությունը ցույց է տալիս զգալի տարբերություններ, որոնք կարող են համարվել նույն թարգմանչի երկու անգամ կատարած թարգմանության տարբերություններ:

Ցույց տալու համար, թե ինչ ընույթի և ինչ չափի են այդ տարբերությունները, բերենք դրանցից մի քանի օրինակ: Նախ՝ վերնագիրը Արովյանի արխիվում պահպանված հատվածի վերնագիրն այսպես է. «Աղելայիդա Փոն Վուլֆինգեն», կամ յիշատակարան բարբարոսութեան երեք—տասաներորդ դարու», իսկ «Կովկասում» տպվածի վերնագրում «Յիշատակարան»-ի փոխարեն՝ ասված է՝ «արձանագիր»:

Այստեղ գործող անձանց ցանկում տարբեր է նաև գլխավոր հերոսների ազդանվան վերջավորությունը՝ «Վուլֆինգինեան», բայց բուն տեքստում պատահում է նաև՝ առանց եան վերջավորության՝ Փոն Վուլֆինգին:

Արովյանի ինքնագրում երկը կոչվում է «Եղերերգութիւն» ի և խաղ, իսկ «Կովկասում»՝ «Եղերերգութիւն»: Առաջինում գործող անձինք կոչվում են «Խաղացող ասձինք», իսկ երկրորդում՝ «Եղերասանք»: Նրանց անուններն ու կոչումները նույնպես որոշ չափով տարբեր են: Այդ տարբերությունները կարելի է տեսնել հետևյալ զուգահեռ համեմատությունից:

Արովյանի ինքնազբում № 11 ձեռ.

Խաղաղին

Տեսարանն է բաց տեղի մի ի գեղջ միում հեթանոսաց, ի յետին կողմն տեսարանին խորառակեալ դնի կուռքըն առիւծագլուխ, լանջք նորա մորթապատ, յաջոյ ձեռին կալեալ զմահակ. ի գլուխն ունի զթոչուն, նման դաղի... յերկուս կողմունս տեսարանին գտանին մարմինք կողոպտեալք, ումանք ևս այրեալք, խուղք ծխապատք և աւերեալք:

Տեսիլ առաջին

Թեօրալդ և զինակիրն (Դիմեն ընդաւերակո կոյս)

Այսքանն էլ բավական է որոշ գաղափար կազմելու Արովյանի ինքնագրի և «Կովկաս» թերթում տպվածի միջև եղած տարբերությունների մասին: Այս համեմատությունը ցույց է տալիս, որ տարբերություններն իրոք զգալի են, Բայց նկատի ունենալով հենց այդ տարբերությունները՝ կարելի է ենթադրել, որ «Կովկասում» եղածը տպագրվել է Արովյանի հետագա, ամբողջական ինքնագրից, որն ըստ երեսույթին մնացել է հիշյալ լրագրի արխիվում և մեզ չի հասել: Իսկ Արովյանի արխիվում պահպանվածը (№ 11 ձեռագիրը) կարելի է համարել հեղինակի կատարած թարգմանության նախընթաց սկսվածքը, որ կիսատ է թողել նա, ու հետո նորից սկսել և ավարտել թարգմանությունը՝ հանձնելով այն հիշյալ լրագրին տպագրելու համար:

«Վերք Հայաստանիի» հայտնի «Հառաջաբանում» Արովյանն ասում է. «Ինչ գիրք ասես՝ որ չեմ սկսել թարգմանիլ ու կիսատ թողարք...»:<sup>1</sup> Այս խոստովանության հիման վրա կարելի է ենթադրել, որ հեղինակի արխիվում «Աղելախիդայի» պահպանված պատառիկը հենց այդ սկսած ու կիսատ թողնված թարգմանություններից մեկն է:

Բայց եթե, մինչեւ իսկ հաստատապես պարզվի, որ «Կովկասում» տպվածը Արովյանին չի կամ այդ տպված հատվածի մեջ անհայտ ինքնագիրը նրա ստորագրությունը չի կրում, այնուամենայնիվ առայժմ դրանով միայն կարելի է մոտավոր գաղափար կազմել այդ երկի բովանդակության ու բնույթի մասին, որը գրավել է Արովյանի ուշագրությունը: Բայց մենք չենք կասկածում, որ «Կովկասում» տպագրվածը Արովյանի գրչին է պատկանում և ոչ մի այլ հեղինակի:

Պահպանված ձեռագիր հատվածի և տպագրվածի համապատասխան մասի միջև եղած լեզվական-խմբագրական տարբերությունները հիմք չեն տալիս «Կովկասում» տպվածը համարելու այլ հեղինակի թարգմանություն, մանավանդ որ այդ տարբերությունները շատ փոքր ու անշան

«Կովկաս» № 49, 1846 թ.

Դիպան առաջին

Տեսարանն առաջի առնէ զաւերակո գեղջն կոապաշտից. ի յետին կողմն տեսարանին կայ անկեալ տպաստ դրօշեալ առիւծագլուխ, կուրծքիւր պատեալ մորթովք, յաջոյ ձեռուին ունի զկայծակունս, ի գլուխն զթոչուն նման սագի, յաջմէ և յահեկէ մերկացեալ և խանձուեալ դիակունք, և հիւղք կիսախարխուլ և ծխեալք:

Վարագույր Ա.

Տէորալդ և զինակիր (Ելանեն ի միջոյ աւերակացն)

<sup>1</sup> Խ. Արովյան—Ընտիր երկեր, հ. I, 1939 թ., էջ 6:

և Արովյանի մի այլ թարգմանության երկու տարբեր վարիանտների («Օվսաննա» և «Հինդա») միջև եղած տարբերությունների համեմատությամբ: (Տես Արովյանի «Երկերի լիակատար ժողովածու», հ. 4-րդ, էջ 263—285 և 295—311):

Վերևում ասացինք, որ հայտնի չէ թե ունից է թարգմանված այս երկը: «Աղելախիդայի» աղբյուրը փնտրելիս՝ գրականոթյան պատմության ոռուերեն աղբյուրներում հանդիպեցինք երկու գրվածքի, որոնց վերնագրերում հիշվում է Աղելախիդա անունը:

ш) „Сестра Аделейда, ее заблуждения, слабости и раскаяние, перевод с франц. яз. Москва, 1789 г.

Այս երկը հիշատակվում է Ն. Ի. Նովիկովի (1744—1818) հրատարակչական գործունեությանը վերաբերող աշխատություններում<sup>1</sup> և ոռու գրականության բիբլիոգրաֆիաներում:<sup>2</sup>

Այդ աղբյուրներում չի հիշատակված հիշյալ երկի հեղինակի անունը՝ իմացվում է միայն, որ դա թարգմանություն է ֆրանսերենից:

բ) Նույն անունը (Աղելախիդա) պարունակող վերնագրով մի գրվածք ունի 18-րդ դ. ֆրանսիական լուսավորության հայտնի ներկայացուցիչներից մեկը՝ Ժան Ֆրանսուա Մարմոնտելը (1723—1799), որի այդ գրվածքի լրիվ վերնագիրն այս է. «Ալպիական հովվուհի Աղելախիդան»: Ակադեմիկոս Ն. Ս. Դերժավինն իր «Բուլղարիայի պատմության» 3-րդ հատորում հիշատակում է այդ գրվածքը, իրեն սերբական ազգային զարթոնքի էպոխայի խոշորագույն լուսավորիչներից մեկի՝ Դոսիֆեյ (Դմիտրի) Արրաղովիչի (1743—1811 թ.թ.) թարգմանություն,<sup>3</sup> որ կտտարված է XIX դ. սկզբին: Այդ գրվածքներից ոչ մեկը չկա Երևանի գրադարաններում, որպեսզի կարելի լիներ ստուգել, թե Արովյանի «Աղելախիդան» որևէ առնչություն ունի այդ երկերի հետ: Հիշյալ պատմագրական աղբյուրներն էլ կոնկրետ գաղափար չեն տալիս այդ գրվածքների բովանդակության մասին: Իմացվում է միայն, որ գրանք դրամատիկական երկեր չեն, ուրեմն Արովյանի աղբյուրը եթե դրանք են, ապա «Աղելախիդա ֆոն Վուլֆինգենյանը» թարգմանություն չէ, այլ ինքնուրույն ստեղծագործություն, որի մեջ գուցե օգտագործված է ասենք, Մարմոնտելի կամ մյուս անհայտ հեղինակի երկի նյութը—սյուժեն: Համենայն դեպք առաջին որոշակի ոչինչ չենք կարող ասել Արովյանի «Աղելախիդայի» աղբյուրի մասին:

Այդպիսով, Արովյանի երկերից «Աղելախիդա ֆոն Վուլֆինգենյան» եղերերգությունը առաջին մեջ հայտնի միակ գեղարվեստական գործն է, որ սկսել է տպագրվել հեղինակի կենդանության օրով, բայց այն էլ, ոժբախտաբար անավարտ մնացել: Սակայն անհավանական չէ, որ այլ նյութեր ևս տպագրված լինեն Արովյանին ժամանակից հայ և ոռու մամուլում, որ մեզ համար զեռես անհայտ են մնում:

<sup>1</sup> В. П. Семенников—Книгоиздат. деятельность Н. И. Новикова и типографич. компании, 1921 г.

<sup>2</sup> С. Г. Светлов—Издательская деятельность Н. И. Новикова. 1946 г.

<sup>3</sup> В. С. Сопиков—Опыт российской библиографии. ч. IV. 1905 г., стр. 87.

<sup>4</sup> Академик Н. С. Державин—История Болгарии. том III, 1917 г., стр. 75.

## 4.

Իսկ ի՞նչ է տպագրվել Արովյանի գեղարվեստական երկերից նրա ողբերգական կորստից հետո՝ հաջորդ երկու տասնամյակում՝ 50—60-ական թվականներին։ Առաջին հայացքից այս հարցը էլ ավելի է թվում անտեղի։ Միթե լրիվ չափով հայտնի չէ թե ինչ է տպագրվել։ Զարմանալի է, բայց փաստ է, որ այդ երկու տասնամյակի ընթացքում պարբերական մամուլում Արովյանի մի քանի երկերի տպագրված լինելը նույնիսկ արովյանադետների համար կարելի է «հայտնապորձություն» համարել։

Այս առնչությամբ նախ տեղին ևնք համարում այստեղ վերհիշե Արովյանի մահից երկու տարի հետո՝ 1850 թ. մարտի 31-ին Զմյուռնիայի «Արշալույս Արարատյան» լրագրում տպագրված նրա «Աշխարհիկ բարբառ Երևանցի հայոց» փոքրիկ պատմվածքի հայտնագործության պատմությունը։ Բարեբախտաբար այդ լրագրի թե այդ և թե նախորդ ու հետադա տարիների լրիվ կոմպլեկտները կան Երևանում։ Մատենադարանում, ուր աբովյանագետները կարող էին հանդիպած լինել Արովյանի հիշյալ պատմվածքին։ Տպագրիլով Արովյանի այդ պատմվածքը, «Արշալույս Արարատյանի» խմբագրությունը վերնագրի տակ նշել է՝ «Դրեալ ի պատուելի Խաչատուր վարժապետէ Արովեան»։

Դեռ 1861 թ. «Կոռւնկ հայոց աշխարհի» ամսագրի հուլիսյան գրքում Մ. Տեր-Ազարյանն իր հայտնի հողվածում («Մեկ քանի խոսք Արովյանի վերա») հաղորդում է, որ՝ «Արշ. Ար.» լրագրի 1850 թ. 31 մարտի 160 համարումը (պետք է լինի 360, Ա. Ա.) տպված է մի փոքր պատմություն, իբրև օրինակ Երևանցի աշխարհորեն բարբառի։ Մենք չենք իմանում, թե ով է հասցրել այս հողվածը հարգելի հրատարակչին, բայց պետք է ասել, որ նրա մեջ մի քանի տեղերում Տաճկաստանի հայերի ոճ է գործ դրված և տառերի փոփոխություն»։<sup>1</sup>

Մ. Տեր-Ազարյանից հետո 32 տարի անց, 1893 թ., Արբահամ Այվազյանն իր հայտնի «Շար հայ կենսագրությանց» աշխատության Բ. հատուրում Արովյանին նվիրված կենսագրական հողվածում (էջ 76—90՝ «Քանաքեռցի Խաչատուրը») նույնպես հիշատակում է «Իղմիրի «Արշ. Արարատյան» լրագրույն 160 թվոյն մեջ Երևանու գավառաբարբառով տպված փոքրիկ պատմություն մը»։<sup>2</sup> Նույն հիշատակումն արված է նաև Արովյանի «Երկերի» 1897 թվի հրատարակության՝ Ստ. Տեր-Ասարգսյանի գրած առաջարանում և այլն։ Ահա, այս ամենից հետո՝ 1941 թ. մայիսին, պատմաբան ընկ. Մ. Ներսիսյանն էլ «Ա.Հ.» թերթում հաղորդում է, որ ինքը կեռյի արխիվը նայելիս, հանդիպել է «Արշ. Ար.» թերթի մի համարի, որ պարունակում է Արովյանի վերոհիշյալ պատմվածքը (տես «Ա.Հ.» 1941 թվի մայիսի 10-ի համարը). Արովյանի այդ պատմվածքի հեղինակային ինքնագիրը չի պահպանվել, բայց զարմանալի է, որ Արովյանի երկերի Դ. հատորում հեղինակի հիշյալ պատմվածքի մասին գրված ծանոթագրության միակ աղբյուրը

<sup>1</sup> «Կռունկ Հայոց աշխարհի», 1861 թ. հուլիս, էջ 541։

<sup>2</sup> Ա. Այվազյան—Շար հայ կենսագրությանց. Բ. հատոր, 1893 թ. էջ 87; Ըստ Երևան Այվազյանն անձամբ չի կարդացել Արովյանի պատմվածքը «Արշ. Արարատյանի» մեջ. այդ երեսում է նրանից, որ նա թերթի Ներթ ճիշտ ցույց չի տալիս, այլ կրկնում է Տեր-Ազարյանի սխալը՝ № 360-ի փոխարեն նշելով № 160։

եղել է ընկ. Մ. Ներսիսյանի վերոհիշյալ հաղորդումը։ Բայց «Աշխարհիկ բարբառից» ավելի քան մեկ տասնամյակ հետո տպագրված մի քանի այլ երկերի էլ տպագրված լինելը նույնութեան անորությունն է ոչ միայն ընթերցող հասարակության, այլև արովյանագետների համար։

Այսպես ահա, Արովյանի ակադեմիական հրատարակության այդ (հեղինակի արձակ երկերն ամփոփող) հատորից դուրս են մնացել հեղինակի երկու արձակ գրվածք, որոնք տպագրվել են Արովյանի անհայտացումից 16 տարի հետո, 1864 թվին, Պետրոս Սիմոնյանի «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում, իսկ մինչ այդ ու նրանից հետո նրանցից մեկը հիշատակվել է Արովյանին վերաբերող մի քանի հոդվածներում, բայց ոչ իբրև տպագրված, այլ իբրև անտիպ երկ։ Մենք նկատի ունենք «Ազնես. թղթով պատմություն» վերնագրով նամականի պատմվածքը, տպագրված «Մեղու Հայաստանի» 1864 թ. №№ 12, 13, 14, հեղինակի շատ հետաքրքրական ու արժեքավոր նախաբանով, որը հիշեցնում է մասամբ «Վերք Հայաստանիի», մասամբ «Պարապ վախտի խաղալիքի» ու «Ֆեոդորա կամ որդիական սերա զրամայի նախաբանները» Մյուսը՝ «Ազնվամտություն և շնորհակալություն» վերնագրով պատմվածքն է. տպված՝ նույն «Մեղու Հայաստանիի» 1864 թ. №№ 14, 15։ Երկուսն էլ աշխարհաբար են, գրված, ըստ երեսութիւն «Վերքից» անմիջապես հետո և երկուսի էլ ինքնագրերը դժբախտաբար չեն պահպել Արովյանի մեզ հասած արխիվում։ Այդ նշանակում է, թե նրանք ևս «Ազնելակալայի» ամբողջական ձեռագրի բախտին են արժանացել, այսինքն՝ մնացել են «Մեղու Հայաստանիի» խմբագրության կամ խմբագրի և կամ հրատարակչի արխիվներում ու անհայտացել։

Արովյանի այս երկերի մասին հիշատակում կա ամենից առաջ Մ. Տեր-Ազարյանցի վերոհիշյալ հոդվածում («Կոռունկ հայոց աշխարհի» 1861 թ. հուլիս, էջ 546), երբ այդ երկերը դեռ չեն տպագրվել։ Ապա հիշատակվում են Ա. Այվազյանի «Շար. հայ կենսագրությանց» նույն գրքում (էջ 88), Արովյանի «Երկերի» 1897 թ. հրատարակության առաջաբանում (էջ 34—36), հերթականությամբ չորրորդ անգամ Արովյանի «Դիվանի» Ա. հատորին կցված նյութերի ցանկում (էջ 363) և վերջապես 5-րդ անգամ նրանք հիշատակվում են վաստակավոր արովյանադեմ Երվանդ Շահազիզի 1945 թ. հրատարակված աշխատության մեջ («Խ. Արովյանի կենսագրությունը», էջ 99)։ Բայց զարմանալին այն է, որ այդ բոլոր հիշատակումները անելիս, հիշյալ արովյանագետներից ոչ մեկը ցույց չի տալիս, թե երբ և որտեղ են Արովյանի այդ երկերը տպագրվել։ Տեր-Ազարյանը հիշատակել է դրանք մինչև նրանց տպագրվելը, անձամբ տեսած լինելով հեղինակի ձեռագրերը Արովյանի ժառանգների մոտ, նրա մյուս երկերի ձեռագրերի հետ միասին։ Իսկ մյուս հեղինակները (Ա. Այվազյան, Ստ. Տեր-Ազարզոյան, Ե. Շահազիզ) ելնում են միայն Տեր-Ազարյանի հոդվածից, իրենք անձամբ կարգացած չլինելով այդ երկերը ոչ հեղինակի արխիվում և ոչ էլ տպագրվածը՝ «Մեղու Հայաստանիում», ուր այդ երկերը կրում են հեղինակի լրիվ ստորագրությունը («Ազնեսի» վերջում՝ «Թարգմանեաց Խաչատուր Արովյան», մյուս պատմվածքի վերջում՝ «Աշխատաօիրեաց Խաչատուր Արովյան»), իսկ որ «Ազնես թղթով պատմությունը» ունի նաև նախաբան, այդ արգեն «Ազնեսի» հետագա հիշատակողները չեն իմացել, Մ. Տեր-Ազարյանն էլ այդ նախաբանի մասին չի նշել, թեև օգտագործել, մեջբերում է կատարել Տեղեկագիր 9—6

նրանից իր հոդվածում՝ առանց ցույց տալու բուն աղբյուրը և դրանով դարմանք ու տարակուսանք առաջացնելով հետագա շրջանի բանասերների մեջ։ Այդպիսով, տպագրվելուց հետո էլ, ավելի քան ութսուն տարի, բոլորովին անհայտ է մնացել այդ ծավալով փոքր, բայց Արովյանի համար շատ բնորոշ և արժեքավոր նախարանը, որը մենք անհրաժեշտ ենք համարում այստեղ մեջբերել ամբողջությամբ։

«Էս ողբալի պատմության միտքն էն ա, որ մեկ աղնվական տղա, երեւելի աղգի որդի, մարդկանց մեջ ընկնելով էն տեղն ա հասնում, որ ավագակ ա դառնում։ Բայց էս ավագակ ժամանակն էլ իր աղնվությունը, բարեսրտությունը չի թողնում։ Վերջապնս մեկ աղջիկ ասիրում, փախցնում, չար ընկերների խոսքովը սարումը մենակ թողում, ինքն էլ հետո ձեռք ա ընկնում։ Ինչքան պատիժ, խոստմունք նրան անում են, որ ընկերներին մատնի, չի անում ու վերջը ինչ զիշեր որ իր սիրած աղջիկն ա մեռնում, էն զիշերն էլ սա է հոգին տալիս։ Սրա գրողը մեկ երեւելի կին ա, որ շատ գրքեր ունի շինած։ Թող կարդացողը էնդուր չի մտիկ անի, որ ես աշխարհաբար եմ շրջել ու զեռ փոքր կոշտ ա։ Թող զարմանա, թե կնիկ արմատն էլ Եվրոպիումը դալամ ածել գիտի։

Ա՛խ, երաբ, ինչ սրտով որ զիշերը քունս կտրած, էսպես բաները գրում եմ, սուրազս տեղը կհասնի, թե չէ։ Դրաբառ լավ, օսալ ես էլ զիտեմ, ամա ես էլ ուզում եմ, որ մեր խալիսը օգուտ ունենա, մեր աղնիվ աղգը, որ մինչև էսօր լեզուն փակվել գրաբառը չի կարում սովորել, չի հասկանում, աշխարհաբառ լեզուն էլ զիտցողի աչքին փուշ ա երեսում, լեզի, թեև ինքն էլ հենց էն լեզվովն ա իր սիրտը, հոգին հայտնում։ Յո լեզուն եմ լսել երեխությունիցս, իմ սիրելի աղգ, քո քաղցր լեզվովն ա սիրտս բաց էլել։ Լեզուն դարդակ բառը չի, հոգին ա մարդիս։ Թող դու հասկանաս և իւմանաս, որ քո հետ խոսալը ինձ համար ավելի քաղցր ա, քանց մեծ մեծ դրաբառ կոտրատել, էլ սրտումս դարդ չի մնալ։ Տասը հազարը թող հասկանան ու կարդան, մեկ քանի ջուխտ ու կենտ խոսողի ասածին ու ծիծաղելուն գըլուխս քաշ արած մտիկ կանեմ։ Ամենի սրտին դիր գալ չի ըւել։ Ամա ցավն էն ա, որ բազի զիտուն մարդ, որ մեկ դարդակ թասկերա էլ ոչ աշխարհաբառ, ոչ դրաբառ օրինավոր չի կարող դրել, սաղմոսը կարդալիս էլ շատ զիր ու բառ սաղ սաղ ա կուլ տալիս, նա էլ ա մարդի վրա խոսում։ Բերանն ապրի։<sup>1</sup>

Ահա այս նախարանից հետո՝ թերթի հաջորդ էջի սկզբից սկսվում է «Աղնես. թղթով պատմությունը»։ Առաջին հայացքից դժվար է նկատվում, որ «Բանասիրական» վերնագրի տակ նախորդ էջում տպված այդ նախարանը կարող է որևէ կապ ու առնչություն ունենալ հաջորդ էջում տպված նամականի պատմվածքի հետ, մանավանդ որ խմբագրության կողմից ոչ մի նշում ակնարկ չի արված այդ մասին։

Այնուամենայնիվ դժվար է հավատալ, որ ինչպես «Աղնեսը», նույնպես և նրա մեծարժեք նախարանը հետագա բանասերների աչքից վրիպել է։ Բայց որ իրոք արովյանագետ-բանասերները չեն նկատել այդ նախարանն էլ՝ բերենք հետեյալ շատ համոզիչ փաստը։ Քիչ առաջ նշեցինք, որ այդ նախարանը Մ. Տեր-Աղարյանն օգտագործել է իր հոդվածում, բայց

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1863 թ. № 12, էջ 101, «Բանասիրական» վերնագրի տակ։

բուն աղբյուրը ցույց չի տվել և շփոթեցրել է հետագա բանասերներին։ Նա իր հողվածում մեջը բումնիր է կատարում մեծ մասամբ «Վերք Հայաստանիի» «Հառաջարանից» և բուն վեպից, «Պարապ վախտի խաղալիքի» «Հառաջարանի» և այլ աղբյուրներից։ «Վերքի» «Հառաջարանից» բերված քաղվածքից անմիջապես հետո, Տեր-Ազարյանը մի քաղվածք էլ բերում է այն՝ ժամանակ դեռ անտիպ «Ազնեսի» նախարանից («ամա ես էլ ուզում եմ...» բառերից սկսած մինչև վերջ), բայց իրը աղբյուր ցույց է տալիս դարձյալ «Վերք Հայաստանիի» «Հառաջարանը»։ Եվ ահա 36 տարի հետո՝ Արովյանի «Երկերի» 1897թի հրատարակության խմբագիրը և նույն հատորի առաջարանի հեղինակ Ստ. Տեր-Ազարյանը, կարդացած չլինելով 36 տարի առաջ տպագրվոծ «Ազնեսն» իր նախարանով՝ զարմանք ու տարակուսանք է հայտնում, թե Տեր-Ազարյանը որտեղից է վերցել այդ կտորը, քանի որ ցույց տրված աղբյուրում («Վերքի» «Հառաջարանում») այդպիսի տողեր չկան։ Այդ առթիվ նա դրում է. «Մի բան՝ որ մեզ շատ զարմացրեց և որի հիշատակությունն այստեղ մենք ավելի քանի դեպ ենք համարում, այս է. Մ. Տեր-Ազարյանի հայտնի հողվածում, «Վերք Հայաստանու, Ողբ հայրենասիրու» հառաջարանից հանված՝ հայտնի պարբերությանց շարքում մի այնպիսի կտոր էլ է բերված, որ ոչ առաջին տպագրության մեջ, ոչ էլ պարոն Վարդան՝ Արովյանի ուղարկած պատճենում չկա։ Ահա այդ կտորը, որ «Կոռունկի» 1861, հուլիսի 549 էջի 5-րդ տողի «Բեղարում...» բառից և երկու կետից հետո սկսելով վերջանում է նույն էջի 17-րդ տողի վերջին բառով ու հողվածագրինույն երեսում զրած ծանոթությամբ ցույց է տված այսպես՝ «Վերք Հայաստանի» երես 9։<sup>1</sup>

Այնուհետև Տեր-Ազարյանը մեջ է բերում «Ազնեսի» նախարանի նույն այն հատվածը, որ Տեր-Ազարյանը մեջ է բերել իր հողվածում, իրը քաղվածք «Վերքի» «Հառաջարանից»։

Պարզ է, որ եթե Ստ. Տեր-Ազարյանը անձամբ կարդացած լիներ «Ազնեսն» իր նախարանով, ապա կհիշեր, որ Տեր-Ազարյանի բերածը այդ նախարանից է վերցված և չէր զարմանա, այլ ընթերցողին կտեղեկացներ Տեր-Ազարյանի պատահական սխալը, ցույց կտար թե որտեղ է տպագրվել «Ազնեսը», և այնուհետև Արովյանի այդ երկը հայտնի կդառնար ոչ միայն հետագա շրջանի արովյանագետներին, այլև Արովյանի բազմահազար ընթերցողներին։ Իսկ այդ ամենի հետ մեր այս «հայտնագործությունն» էլ ավելորդ կլիներ։

Կարևոր հարց է «Ազնեսի» հեղինակի հարցը։ Ուժից է թարգմանված։ Արովյանն իր գրած հատուկ նախարանում միայն ակնարկում, բայց ուղղակի չի հիշատակում հեղինակի անունը։ Ո՞վ է այն օմեկ երեկոի կին գրողը, որ շատ գրքեր ունի շինած։ և որն իր ստեղծագործությամբ գրավել ու ոգևորել է հայ մեծ լուսավորչին։ Արովյանի ապրած շրջանում և նախորդ դարում եվրոպական գրականության մեջ՝ Ասնա Ռադկլիֆ (1764—1823), Կլարա Ռիվ (1729—1807), Ելիզավետա Բարբիտ Բրաու (1806—1861), Նիդերլանդական գրականությունից՝ Ելիզավետա Վաւլֆ (1738—1804), Ահաթա Դիկեն (1741—1804), Ֆրանսիական գրականությունից՝ Մարի Կոտտեն

<sup>1</sup> Խ. Արովյան—Երկեր, Մոսկվա, 1897թ. «Խմբագրից» էջ 28

(1770—1807), մեծահոչակ ժողով Զանդը (1804—1876), Ստ. Ժանլիսը (1746—1830), Մարք Դ. Ֆլավինյի դ' Ազու կամ Դանիել Ստերն (1805—1876) և ուրիշներ:

Արովյանի ասած «Երևելի կին զրողը» սրանցից մեկն ու մեկը պետք է լինի: Երևանի գրադարաններում այդ զրողների երկերի լրիվ ժողովածուները չկան ու ոչ մի այլ աղբյուրից առայժմ հնարավորություն չունեցանք որոշելու թե Արովյանը նրանցից մեջը նկատի ունի:

## 5.

Արովյանի մի քանի հանրահայտ երկերի առաջին տպագրությունները ուշադիր համեմատելով պահպանված հեղինակային ինքնազրերի հետ, պարզվում է, որ զրանք զդալիորեն տարրերվում են: Պարզվում է, որ այդ երկերը տպագրվել են հեղինակի՝ այժմ չպահպանված ինքնազրերից, բայց կարծվել է թե հենց հեղինակի արխիվում պահպանվածներն են տվյալ երկերի միակ ձեռագրերը, որոնցից կատարվել են դրանց բոլոր հրատարակությունները:

Այս կարգի երկերից ամենից՝ առաջ հիշենք «Հաղարփնչեն» սատիրապոեմը, հայ և վրաց ժողովուրդների դարավոր եղբայրության այդ առաջին գեղարվեստական արտահայտությունը հայ նոր զրականության մեջ, մի ստեղծագործություն, որով հեղինակը ցայտուն կերպով ցուցագրում է երկու բախտակից ժողովուրդների հոգեհարազատությունը և նրանց շահերի միանությունն օտարերկրյա ճնշումների դեմ:

Արովյանի «Ընտիր երկերի» Բ. հատորի համապատասխան ծանոթագրության մեջ (էջ 391) ասված է, որ «Հաղարփիշեն» առաջին անգամ տպագրվել է «Մեղու Հայտստանիում» (չի նշված, թե որ թվին և որ համարներում. Ա. Ա.), հետո էլ առանձին գրքով (1912 թ. Թիֆլիս): Ապա ասված է թե՝ պոեմի «Ճեռագիրը գտնվում է Արովյանի արխիվում»:

Այս, ճիշտ է, որ «Հաղարփիշեն»-ի հեղինակային մի ճեռագիրը գտնըվում է Գրական Թանգարանի Արովյանի արխիվում: Բայց ծանոթագրողը չի ասում, որ մեզ հասած այդ ճեռագիրը այն չէ, որի համաձայն Արովյանի այդ երկը տպագրել է Պ. Սիմոնյանն իր շարաթաթերթում («Մեղու Հայտստանի» 1864 թ. №№ 17 և 18): առանց պոեմի հայտնի նախարանի: Եղել է այդ սատիրապոեմի հեղինակային մի այլ ճեռագիր ևս, որն զգալիորեն տարբերվում է արխիվում պահվող (№ 61) ճեռագրից: 1912 թ. առանձին գրքով, ինչպես և սովորական շրջանի երկնատոր «Ընտիր երկերի» Բ. հատորում և առանձին գրքույկով տպագրվածը հրատարակվել է այդ պահպանված (№ 61) ճեռագրի հիման վրա, մինչդեռ «Մեղու Հայտստանիում» առանց հեղինակի հայտնի նախարանի տպագրվածը՝ զգալիորեն տարբերվում է № 61 ճեռագրից, ուրեմն և 1912 թ. ու «Ընտիր երկերի» Բ. հատորում, ապա և առանձին գլքույկով տպագրվածներից:

Ներկա հոդվածում հնարավոր չէ եղած բոլոր տեքստային տարբերաթյունները ցույց տալ: Այդ պետք է արվի հեղինակի երկերի ակադեմիական հրատարակության համապատասխան հատորում: Բայց այստեղ հարկ է նշել էականն ու կարեորը, որ վկայում է «Մեղու Հայտստանիում» տպվածի մի այլ ճեռագրից վերցված լինելու փաստը:

Նախ ծավալն է տարբեր. պահպանված ինքնագիրը ու նրա համաձայն 1912 ու 1940 թ. թ. («Ընտիր երկեր» Բ. հատոր) տպվածները բաղկացած են 388 տողից, մինչդեռ Պ. Սիմոնյանի շաբաթաթերթում տպագրածը 399 տողից է, ուրեմն 11 տողով ավելի է: Բայց այդ, «Մեղու Հայաստանիում» տպվածը հեղինակի արխիվում պահված ինքնազրի համեմատությամբ դգալի չափով ներքին, տեքստային տարբերություններ ունի:

Հարկ է նկատել, որ Արովյանի մասին եղած ուսումնասիրություններում ու լրագրական բազմաթիվ հոդվածներում հատուկ ուշադրության առարկա չի եղիլ Արովյանի այս գործը: Միայն թուոցիկ մեկ երկու տողով նշվել է, որ «Հաղարփեցեն» պոեմում Արովյանը «նկարագրել, ձաղկել ու ծաղրել է» ժամանակի «բյուրոկրատիայի ... սխրագործությունները» (Ա. Տերտերյան, «Արովյանի ստեղծագործությունը», 1941 թ., էջ 356—7): Եվ այսքան միայն: Այդ ճիշտ դիտողությանը, սակայն, կարելի է և պետք է էական լրացումներ անել «Հաղարփեցենը» գնահատելիս, նկատի ունենալով «Մեղու Հայաստանիում» տպագրված նրա օրինակը: Այս օրինակի պարունակած տարբերություններն ավելի որոշակի խոսում են այն մասին, որ Արովյանը ծաղրում, ձաղկում է ոչ միայն ցարական բյուրոկրատիայի պաշտոնյաներին ընդհանրապես, այլ նաև, տվյալ դեպքում հատկապես ցարական կառավարության եվրոպացիներին նկատմամբ Արովյանի ունեցած քննադատական հայացքի ու վերաբերմունքի մասին, որ ավելի ցայտուն կերպով կա նաև Արովյանի մի շարք այլ երկերում ևա:

Բերենք մեկ-երկու քաղվածք, որ հաստատում է մեր այս կարծիքը: Արովյանի արխիվում պահպանված ձեռագրում (ու դրա համաձայն տըպվածներում) պոեմը սկսվում է այս տողերով.

«Մեկ իմաստուն մարդ մեր հաղարփեցի

Անունը լսելով... և այլն:


A 3/510 Նույն ձեռագրում «իմաստուն մարդ» բառերի փոխարեն սկզբում եղել է «եվրոպացի», որը ջնջված է ու փոխարինված այդ արտահայտությամբ: Արովյանագետները դրան ուշադրություն չեն դարձել կամ չնկատելով և կամ ջնջվածը կարդալ չկարողանալով (շատ ուշադիր պետք է նայել, որ կարդացվի թե ինչ է ջնջված): Բայց ահա «Մեղու Հայաստանիում» տպվածն ուղղակի սկսվում է այսպես.

Մեկ եվրոպացի մեր հաղարփեցի

Անունը լսելով... և այլն:

Բայց գուցե սա պատահական բառ է, որ Արովյանի մեզ հասած ձեռագրում ինքը՝ հեղինակը փոխարինել է վերոհիշյալ արտահայտությամբ: Բարեբախտաբար, ոչ: «Մեղու Հայաստանիի» տպագրվածում (ուրեմն և մեզ անհայտ ձեռագրում) պոեմի հետագա մասերում շատ որոշակի է ասված, որ հեղինակը նկատի ունի եվրոպացուն, ցարական բյուրոկրատիայի եվրոպացի աստիճանավորին, որպիսիք շատ կային թե Անդրկովկասում և թե Ռուսաստանում ընդհանրապես՝ ցարական պետության աղքային արժանապատվությունից զուրկ ուստի ազնվականության արևմտահվրոպականի հանդեպ ունեցած ստորաքարշության հետեանքով: Ահա մեկ-երկու տող ևս.

Պոեմի 180—181-րդ տողերը պահպանված ձեւագրում այսպես են:



«Եղեղճ վրաստանցիք մնացին սառած,

Իրանց դոնադի ահվալը տեսած» + . . .

Իսկ «Մեղու Հայաստանիում» երկրորդ տողն այսպես է.

«Եվրոպացու հալն ու ահվալը տեսած»

Այդպես էլ տարբեր է նաև 282-րդ տողը: Պահպանված ինքնազրում՝

«Իրանց» հունարար վրա փորձեն»

(«Նրանց» այսինքն «Վրաստանցոց» վրա)

«Մեղու Հայաստանիում»՝

«Իրանց Եվրոպիո հունարը բանացնեն»:

Սակայն, բացի այդ էական տարբերությունը հաստատող տողերից՝  
մեզ անհայտ և հայտնի ձեռագրերի միջև կան տեքստային այլ տարբերու-  
թյուններ են, որոնք էլ ավելի են հաստատում, որ իրոք «Մեղու Հայաս-  
տանի» ում տպվածը «Հաղարփեղեն»-ի հեղինակային մի այլ ձեռագրից է:  
Բերենք այդ տարբերությունների հիմնական մասը.—

Պոեմի Պահպանված ինքնազրում

տողերը  
5-ըդ տող Զահին գնում էր (մաղաժիժ ըլում),  
սիրտը խառնը վում:

30 ՚ Կոթն են դեմ անում՝ գինով լը Շ-  
ը ա ծւ

33 ՚ Անգլուխ հայվան ըլի դես ու  
դեն ընկնում:

35—36 ՚ Զէ, էսպես երկրում շունը չի կենալ,  
էնպես շան հաջաթն իրան բերնին  
տալ:

«Մեղու Հայաստանիում»

Զահին դնում էր, մաղաժիժ ըլում,  
սիրտը խառնվում:

Կոթն են դեմ անում գին ին լը Շ-  
ը ա ծւ:

Ստտկած խոզի ակես դես դեն  
ա ընկնում:

Կուլի համար էնպես են պատմում,  
թէ զինին կլկլալով, շափով ներս  
ածում:

Ու ճոթուծ դունչը հազար ֆոտ առ-  
նում:

Զէ, էսպես երկրում շունը չի կենալ,  
էնպես շան հաջաթն իրան բերնին  
տալ:

50-ըդ տող Գլխին [ու] ոտին վեր հատելով  
տեսավ

Գլխին ու ոտին ծեծելով տեսավ.

51 ՚ Ռը մեկ քանի մի ջահել վրաս-  
տանցի:

Ռը մեկ քանի Հայ ու Վրաստան-  
ցի:

53 ՚ Բաղերը քաղում, խաղողը [մզում]

Իրանցի գին քաղում, խաղողը  
մզում:

74 ՚ Ռւ մեր մուղիկեն, մեր քաղցր  
սկրիպկեն:

Ռւ մեր մուղիկեն, սկրիպկեն, ֆլեռ-  
ուն:

82 ՚ Քո սերն ու շնորհը, սրտիդ հաս-  
ըաթը:

Քո սերն ու տաղան գը սրտիդ  
հասըաթը:

104 ՚ Մեկ մեծ ալարկ ուշունց ու հա-  
ղաք անեծք:

Ռւ մեկ երա տյուք ուշունց ու  
անեծք:

106—109 Շատ ուշունց տալով բերանս հոտե-  
ցավ:

Մաշենիկ ու էլ . . . . .  
շմեաց:

Լեզվիս ու փոքիս բոլոր նյութն հա-  
տավ.

. . . . . ու դուռակի շմաց  
Օսլի, զլերի, էշակի ու զիկի,

Ասելով բերանս հոտեցավ, հենց  
բոնի

էս տավարները, էս սկոտները  
Բերնիս չեն նայում, իմ ասածները

- 115—116  
տողերը      Սատանին ասես, քեզ դժոխվը կտա-  
նի,  
Դուել կկանչի, աբ ինդ կթափի
- 125      Փող պիտի շինած ու ծոցը դրած:  
127—128      Բալ տալ, բալ գնալ, իր փառքը ցույց  
տալ
- 131      Ամենի աչքն էլ վրեղ մայիլ թո-  
ղած:  
145      Էս տեսուկ պատիզ.  
149      Ելի ջերդ կածես նրանց հոգին հա-  
նես,  
150—152      Թե խոսք էլ ասեն, քամակդ  
դեմ անես,  
Ասիացի մարդն զակոն ինչ գի-  
տի,  
Ու քեզ հետ խռաս, կամ հա-  
մարձակվի:  
157      Շատ էլ որ անեն, մեկ պողոսուդ  
կտան.  
163      Գտակները գլխին, բերնին չերխի  
փետն.  
179      Մի քիչ, շունչ առնեմ, [ձեր] իմ  
զլուխը լսմ:  
184      Կամ իր ֆաթերը մթնով հասցնին,  
185      Ու այլք չտեսնեն, վրեն չծիծա-  
ղեն.  
194      Շիրի կորառը ընկավ նա կուփ,  
կուփ.  
204—205      Մեկ էլ, որ ջանին զոռ տվեց բե-  
րագի,  
Զուխտ ոտով ընկավ սուրբ ոմբու  
զլխին,  
206      Ռումբին կատաղեց, և եխը բաց  
արեց  
207      Մեր ուսուալ գժին խոտիտը քա-  
շեց  
209—210      Մեկ էլ որ ուզեց բերանը բաց  
անի,  
Ու իր շկոլի աղոթքն եղ ասին  
216      Ու ջուխտ ոտով նրան էն պես  
քացի տվեց;  
217      Ու հենց ուզում էր զլուխը հանի  
218      Քամակի վրա էլ եղ շուռ ու եկավ
- Սատանին ասես, քեզ դժոխվը կտա-  
նի  
Մեր մեկին ասես, փոքր վեր  
կածի,  
Դուել կկանչի, աբ յունդ կթափի,  
Փող պետք է շինած ու ծոցը դրած:  
Բալ տալ, բալ գնալ, իր փառքը ցույց  
տալ,  
Մարդ էլ որ ուղեն աչքներ չկո-  
խած:  
Ամենի աչքն էլ վրեղ մայիլ էլ ած:  
Էս պետք չեստ, պատիզ.  
Ելի ջերդ կածես, նրանց աչքը  
կհանես,  
Թե մեկ խոսք խռասն, նեղնա-  
յուն կասես,  
Ասիացի մարդն ինչ գիտի դա-  
կոն:  
Նրանցն ազինին, մաթրախ,  
յամակոն:  
Շատ էլ, որ անեն, մեկ պողոսուդ  
կտանին,  
Գտակները գլխին, չի բուխը բեր-  
նին.  
Մի քիչ շունչ առնեմ, ձեր հոլն  
ուշունց տամ,  
Նրան դինջացնին, տրաք-  
տիքը տանին,  
Կամ ֆաթերը մթնով հասցնեն,  
Ու սարդ չի տեսնի վրեն չծի-  
ղաղի:  
Շիրի կարառումը նա կուփ,  
կուփ.  
Կատաղած եղը՝ օբինակը լւիկ,  
ենպես, որ մեկ զոռ տվեց ջա-  
նին,  
Զուխտ ոտով ընկավ սուրբ ոմբու  
զլխին,  
Ռումբին կատաղեց, բերանը բաց  
արեց:  
Մեր դոչաղ, ուսյալ գիտունը  
խոտեց:  
Հենց ուզեց բերանին զոռ տա,  
բաց անի  
Ու իր շկոլի աղոթքն ասին  
Ու ջուխտ ձեռով նրան շափա-  
լախ տվեց,  
Որ հենց ուզում էր կպուխը հանի  
հանի,  
Քամակի վրա կը տիպ պուղ էլ ավ

- 240—242 » Քոռաղադինա, մեկ պղնձով նախթ  
բերել էին, որ տկերը կաւնեն,  
Որ գինին չտանեն:
- 243—246 Խելոք գինեգիժն հենց Փըռ-  
սանդ ճարեց  
Մեկ էլիր ձեռը, որ չե բարձ-  
րաց բեց,  
Ճղղաց, թրպրտաց, նախթի ողինձն  
ընկալ,
- Դուլավ կիմանաս, ինչ [նըա]  
գլխին էլավ
- 252—258 » Էլի մեր նաշար բարի վրաստանցիք,  
Ռախը բռնեցին, նրան դուրս քաշե-  
ցին,  
Զուը զցեցին, երեսը լվացին,  
Գնացին զեղ բերին, կամ հեքիմ  
կանչեն,  
Ըլի իմաստունն՝ որ ափալթափալ  
Հենց մեկ շունչ քաշեց ու քիչ դին.  
Ջացավ.  
Թաքրար քար՝ փետի նա վրա պըծավ:
- 264—266 » Զեռը չորս կողմը քոռը-քոռ ածելիս,  
Քարերը պոկելիս, դոշին խփելիս՝  
Ռըդիանց որտեղ մեկ հազարփեշա
- 269—270 » Դոշեն որ չդրեց՝ աստված կան-  
չելով  
Իսկույն մեկ քանի հոդի ձեն  
տալով
- 273 » Քոթակ-ոտներով [խարար] չվալ բե-  
րանով
285. » Թոխմախ զլխներով բաւի տակ  
չըցեն:
- 286—287 » Հենց ոլլառուխները լցրին ուշունցով  
Դուռակ ու շելմա՝ էկան ձեն տալով
- 288—289 » Մեր հայի մուշտեն, վրացու քացին  
ինպես թունդ դիպավ նրանց զըւ-  
խին, փորին
- 300 » Գլխները ջարդեն, նահատակ ա-  
նեն.
- 303 » Փիւիսոփեին ցխից հանեցին
- 305 » Ել ձեն տալ նրանք հեշ կարձդ էին,
- 318 » Ով կախեթու սուրբ բաժակի համն
- 333—338 » Քեզ ճաշակելիս, էլ զլուխը ձեռին  
Ման գա, չշշմի քո քաղցը հոտով,  
Հինգ թունկի խմի, բեղերն սրելով,  
Էլի դուս դա լուրջ ու պարծենալով
- Քոռաղադինա մեկ պղնձով նախթ  
բերել էին,  
Որ տկերի ծակը կը կալն են,  
Որ գինին նըատնք չտանեն:
- Մեր նախթ աղբերը ձեռը  
հենց վիրացը եցը
- Խանձած, խորոված խոզ խոզ  
գլխի պես,  
Կամ ոկտոկած, փետը ած աք-  
ւոր հավի պես
- Թողուտաց, ճղղաց, նախթի ողինձն  
ընկալ:
- Էլի մեր նաշար բարի վրաստան-  
ցիք քը ոտիցը  
Բռնեցին նրան, դուրս քաշեցին,  
ջուը քցեցին,  
Երեսը լվացին, գնացին զեղ բերին  
կամ հեքիմ կանչեն, էլի գիտունն  
չենց ափալ թափալ, մեկ որ շունչ  
քաշեց,  
Ու քիչ դինջացավ, էլի քարի փետի  
վրա պըծավ:
- Զեռը չորս կողմը քոռ քոռ քարերը  
պոկելիս  
Դոշին խփելիս, որդիանց որտեղ մեկ  
հազար փեշա
- Ոտը քաշեց, որտին, Աստված  
կանչելով,  
Էն սհախը մեկ քանի հոդի ձեն  
տալով
- Քոթուկ ստներով, խարար բերանով,  
Թոխմախ զլխներով յախոյ չըցեն:  
Բանհուգի չըւեն, անգլու չմնան  
չմնան  
Հենց ոլլառուխները լցրին ուշունցով  
Արմյաշկա, դուռակ էկան հաշելով,  
Մեր հայի մուշտեն, վրացու քացին  
ինպես մեկ դիպավ նրանց զլխին ու  
փորին  
Գլխները ջարդեն, շնորհակ տնեն:
- Մեր փեւիսոփեն ցխից հա-  
նեցին
- Շունը ձեն կտար, նըատնք  
տալ չեն,
- Ով կախեթու սուրբ գինու համն  
Քեզ ճաշակելիս էլ զլուխը ձեռին  
ման գա,  
Չշշմի քաղցը հոտով, հինգ թունկի  
խմի:

Հազար տեղ ասի. «Էս օր խմեցի,  
Հինգ թունգի, կուզեմ քայց խմեմ  
էլի».

Բեղեքը սրելով էլի դռւս գտ  
Շուրջ ու ոլարծենալով հազար տեղ  
ասի,  
Թե էս օր խմեցի հինգ թունկի,  
Կուզեմ թե խմեմ էլի,

339—340 > Ինձ համար գինին, Քոի ջուրն մեկ ա  
ինձ համար, որ նա կը ակալ էլ դառնա

Ինձ համար գինին ու Քոի ջուրը  
մեկ ա.

Նա ուր հենց կը ակալ էլ դառնա,

345 > Քեֆ կանեմ ու իմ հոգսը կը հո-  
գամ.

Իմ ըանս կանեանեմ, իմ հոգսը  
կը հոգամ,

358—360 > Էս ա, որ հյիկ մեր ամեն բանը  
Փոխվիլ ա, ամո մեր գինու ջանը  
Դեռ կալրում մնում, զոռը բանացնում.

Էս ա որ մեր ամեն բանը փոխվել ա  
Ամա մեր գինու ջանը  
Դեռ կալրում մնում,

Որ զոռը բանացնեմ.

374—377 > Ու մեղ էլ պահի, որ մեր կախեթու  
Բաժակի դառնու միշտ իմանանք ու  
Միշտ հազար բերնով [հազար փեշեն  
բոնած] ու հազար ձեռով  
Հազար փեշեն բոնած, հազար օր  
ասենք.

Ու մեղ էլ պահի, որ մեր կախեթու  
բաժակի

Դառնու միշտ իմանանք, ու միշտ  
հազար բերնով

Մեր հազար փեշեն հազար ձեռով  
Բոնած, հազար օր ասենք

338 > Հազար շառից, շառից մեղ ազատ  
պահի:

Հազար շառից մեղ ազատ սլահի:

Ահա այս համեմատական մեջբերումները (որոնք չեն սպառում բոլոր  
եղած տեքստային տարբերությունները) անկասկած են դարձնում, որ  
«Հազարփեշեն»-ը տպագրելիս Պետրոս Սիմոնյանը իր տրամադրության  
տակ ունեցել է ոչ թե Աբովյանի արխիվում պահպանված ու մեղ հասած  
ձեռագիրը (№ 61 ձեռագիր-տետրը), այլ մեկ ուրիշը, որը հետագայում չի  
պահպանվել՝ ըստ երեսութիւն մնալով Պ. Սիմոնյանի կամ նրա խմբագրած  
պարբերականի արխիվում:

Մեր կատարած զուգահեռ համեմատական մեջբերումները, բացի այդ՝  
հիմք են տալիս պարզելու նաև, թե այդ ձեռագրերից որն է որին նա-  
խորդել՝ «Մեղում» տպված ձեռագիրը պահպանվածին, թե ընդհակա-  
ռակը:

Նկատի ունենալով դրանց միջև եղած տեքստային տարբերությունների լեզվական-ոճական առանձնահատկությունների որակը՝ եզրակացը-  
նում ենք, որ Աբովյանի արխիվում պահպանված ձեռագիրը, (որի հիման  
վրա կատարվել են «Հազարփեշեն»-ի բոլոր 3 հրատարակությունները  
(1912—1941թ.թ.)) «Մեղու Հայաստանիում» տպվածի համեմատությամբ  
գրականորեն ավելի քիչ է մշակված և հակված է դեպի լեզվի-ոճի գրա-  
կանացումը, տեղատեղ էլ կան երեսութիւն պատկերման տեսակետից անձիշտ  
արտահայտություններ ու համեմատություններ, որոնք մեղ հայունի պահ-  
պանված ձեռագրում արդեն չկան, ըստ որում այդպիսի տեղերը կամ  
հանված են ամբողջովին և կամ փոխարինված ավելի ճշգրիտ արտա-  
հայտություններով:

Այդ տարբերություններն իրենց լեզվական-ոճական որակով ընդ-  
հանուր առմաժք համընկնում են «Վերջ Հայաստանիի» և «Պարագ վախ-  
տի խաղալիք» ժողովածույթի մի քանի առակների պահպանված երկու տար-

բեր ձեռագրերի միջև եղած լեզվական-ոճական տարբերությունների որակին: Հստ որում ակնհայտ է, որ, օրինակ «վերք Հայաստանիի» սկազիր օրինակի բազմաթիվ գրական ոճեր-արտահայտություններ, մակղիրներ, մաքրագիր օրինակում փոխարինված են բարբառայինով — ժողովրդականով: Բերենք մի քանի նմուշ՝ տարբերություններն ընդգծելով:

### «Վերքի» սկազրում

«Մեր տղա չի ծիծաղաս... էս քայլած պարսոնների բեֆըներին կղիպշի—տըտինդ կանեն, շան լտփնիքանց զլխին շուռու կտտան»<sup>1</sup>

«Դարդիմանդ կնիկը մարդի թշվառ հալը տեսնելով, ու իը դարդը մոռանալով՝ տեղիցը շարժեց, որ հաւիվորին քոմակ անի...» (ն.ա. էջ 213):

«Նոքարը արադն ածեց՝ ոֆթա տերաերին դեմ արեց» (էջ 216):

«Ինչ կեցե» (206)

«Ամենի աշքն քեզ է նայում» (207)

«Թագավորներ նախանձուս են» (208)

«Թե մեր համշարիքը ինչպես են սուզ անում» (255)

«Երգ գ «մհառլամի» (255)

«Մայր և դստերք» (256)

«Դստերք» «հերսոնութիւ» (259)

«Երկինքը կամենում էր, որ ամպերը հավաքի...» (281)

«Արտաշատա դաշտովն մն» (296)

### «Վերքի» մաքրազրում

«Մեր տղա չծիծաղաս... կարելի ամեկ քայլախած ճամբութիւ քեֆինդի պատինդ կանեն, արտինդ անի, փուլանը շուռու տառ, հետո տուր ու դմբոց քութին գաւ»<sup>2</sup>

«Դարդիմանդ տանտիկինը մարդի խայտառակությունը տեսավթե չեմ իր ցավը մոռացավ ու տեղիցը ժաժէկավ, որ իր հալիկորին մի քիչ քոմակ անի...» (ն.ա. էջ 29):

«Նոքարը ուր տըտադեց, ավագ սփթա տերաերին դեմ արեց» (32):

«Ի՞նչ անես» (15)

«Ամենի աշքն վերեղ մայել» (18)

«Թագավորներն հասրաթդ քաշեն» (18)

«Թե ինչպես են մեր համշարիքն իր արանց սուզն անում» (72)

«Մհառլամի սուզը» (72)

«Մերն ու դստերքը» (73)

«Աղջկերք (դստերք) հերներս ուր ան» (75)

«Կամեցավակ երկինքն ամպերն հավաքի...» (99)

«Արտաշատա դաշտովն մն» (114)

Այս օրինակները հաստատում են, որ «Վերքի» վերջին՝ մաքրագիր տպագրության համար հեղինակի պատրաստած ձեռագիրն իր ոճով-լեզվով, ավելի ժողովրդական-բարբառային է, քան նրա սկազիր օրինակը:

Այս նույնը կարելի է նկատել Արովյանի այլ երկերի երկուական ինքնազրերը համեմատելիս:

Դրանում համոզվելու համար մեկ-երկու օրինակ էլ բերենք «Պարապահութիւն» առաջարկությունը, ուր նույն առակի երկու ձեռագրի միջև եղած տեքստային տարբերությունները նույն որակի են: Այսպես, ահա, «Մոլա Մասրադնի պղինձը» հայտնի առակի առաջին ձեռագրում («Նախաշավիդում»), որն ավելի վաղ է կաղմված, քան առակների ժողովածուն) եղած գրեթե բոլոր գրական-լեզվական ձեռերը հետազայում փոխարինված են ժողովրդականով-բարբառայինով: «Ասաց»—«ասեց», է—ա («ընկեր է»—«ընկեր ա»), «այժմ»—«հիմիկ», «ու ընդվայր տեղը»—«ու նըհախ տեղը», «մի քանի օրից հետո»—«մեկ քանի օրից

<sup>1</sup> Խ. Արովյան—«Երկերի լիակատար ժողովածուն», Գ. հատուր, 1948 թ. էջ 245

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 68:

եղը», «էլի կծնանի» — «էլի կը ծնի», «Մոլայի» — «Մոլլի» — «չ ալ ետք է ուզի» — «չի պետք է ուզի», «բայց ավելի շահն փորն չի ծակիլ» — «բայց ավելի շահն մւս փորն ածակել», «Եվ վայ մարդին, որ անխելք ագահ է» — «Ով շատ ագահ է վայ էն մարդին էլ»:

Նույն որակի տարբերություններ կան նաև «Զարմանալի մարդիկը» առակի երեք տարբեր ձեռագրերի միջև (առանձին № 107 սևագիր տետրում, ապա «Նախաշավիղում» և վերջինը՝ «Պարապ վախտի խաղալիքում»):

Բայց ոչ միայն «Վերքից» ու «Պարապ վախտի խաղալիքից», Արովյանի մյուս՝ մեկից ավելի ինքնազրեր ունեցող երկերից նույնպես կարելի է բերել նույնատիպ տեքստային տարբերություններ, լեզվական ոճական փոփոխություններ, որոնց ընդհանուր տենդենցին է զուտ գրականը փոխարինել ժողովրդականությունը՝ «հարիր հաղարին» ավելի հասկանալի դարձնելու նպատակով:

Եվ ահա մասնավորապես «Վերք Հայաստանիի» և առակների տարբեր ինքնազրերի միջև եղած լեզվական-ոճական տարբերությունները համեմատելով «Հաղարփեշեն»-ի պահպանված հեղինակային ինքնազրի և «Մեղու Հայաստանիում» տպագրվածի միջև եղած նույնատիպ տարբերությունների հետ՝ եղբակացնում ենք, որ «Մեղու Հայաստանիում» տըպված ինքնազրիրը նախորդել է պահպանված ինքնազրին։ Դրանում համոզվելու համար հարկ չկա այստեղ մեջ բերել օրինակներ, այլ պետք է միայն ուշադիր նայել վերևում զուգահեռ բերված քաղվածքները, որոնց միջև եղած այդ բնույթի տարբերություններն ակնհայտ են։

\* \* \*

Ուշադիր հետազոտությունը ցույց կտա, որ հայ նոր գրականության հիմնազրի մի շարք այլ ձեռագրեր ևս մեզ չեն հասել, բացի այն երկերից (ինչպես օրինակ «Նախաշավիղի» առաջին վարիանտի՝ հեղինակի կենդանության օրով տպագրվածը, «Պվիս»-ի առաջաբանի և այլ ինքնազրերը), որոնց ձեռագրերի՝ մեզ հասած չլինելը հայտնի է արդեն։ Բերենք մի օրինակ ևս։ Մ. Տեր-Աղարյանն իր հոդվածում («Կոռւնկ Հայոց աշխարհի» 1861թ. № 7) մեջ բերելով Արովյանի արխիվում պահպանված քիչ թե շատ ուշագրավ ձեռագրերի ցանկը, ի միջի այլոց նշում է, որ «Թեոդորա կամ որդիական սեր» գրամատիկական երկը ունի երկու ձեռագիր, մեկն առանձին, մեկն էլ մեզ արդեն հայտնի, «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի ինքնազրի վերջում եղածը։ Տեր-Աղարյանը գրում է. «Այս տետրակի (իմա՝ «Պարապ վախտի խաղալիքի»։ Ա. Ա.) վերջումը պատահում է կրկին անգամ մեզ «Թեոդորա» անունով շարադրությունը։ Այս վերջին օրինակը առաջինի հետ չենք բաղդատել իմանալու համար, կա սրանց մեջ զանազանություն, թե ոչ, բայց նյութը միևնույնն է»:<sup>1</sup>

Այս ևս կարող է լրացուցիչ հիմք տալ՝ հաստատելու, ու «Աղելաիդան» ևս ունեցել է երկու ձեռագիր, որից մեզ հասել է միայն նախնականը՝ անավարտը, իսկ լրիվը մնացել «Կովկասի» խմբագրության արխիվում։

<sup>1</sup> «Կոռւնկ Հայոց աշխարհի», 1861թ. № 7. էջ 546։

Մինչդեռ Արովյանի «Երկերի լիակատար ժողովածուի» 4-րդ հատորում ինչպես «Ազելախղային», նույնպես և «Ֆեռոբորային» վերաբերող համապատասխան ծանոթագրություններում ոչ մի տող հիշատակություն չկա այդ երկերի անհայտ ձեռագրերի մասին: «Ֆեղորայի» ծանոթագրությունից իմացվում է միայն, որ նրա «ինքնադիրը գտնվում է «Պարապ վախտի խաղալիք»... ժողովածուի հետ միասին մի տեսքում... Պահպում է Գրական թանգարանում, Արովյանի արխիվ № 56...», իսկ Տեր-Ազարյանի տեսած ու հիշատակած առանձին ձեռագրի մասին ոչինչ չի կարելի իմանալ այդ ծանոթագրությունից:

Այս և այլ փաստերը վկայում են, որ հայ մեծ լուսավորիչ, մեր նոր գրականնեթյան անմահ նախահայր Արովյանի գրական ժառանգությունը դեռ շատ քիչ է ուսումնասիրված: Մեծանուն գրողի «անհայտ բացակայության» այս տարվա սեպտեմբերին նշվող 100-ամյա հորելյանը, բարերախտ առիթ է, որ պետք է խթանի բոցաշունչ, անձնադոհ հայրենասերի հարուստ կյանքն ու գրական ժառանգության խոր ու բազմակողմանի ուսումնասիրության գործը: Իսկ այդ գործի հաջողության լավագույն ցուցանիշներից մեկը պետք է լինի անմահ գրողի «Երկերի լիակատար ժողովածուի» ուժհատորյա ակադեմիական հրատարակության հաջող ավարտումը, որը լինելու է նրա անմահության հուշարձանը, իր մայր ժողովրդի սոցիալիստական աղջային վերածննդի դարաշրջանում:

1948թ.

Օգոստոս



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031510

(204)

